

ԳԵՂԱՄՆԱ

աշխարհ

Քաղաքական, հասարակական, մշակութային թերթ 26 դեկտեմբերի 2025թ. թիվ 25(629)

ԿԱՐՄԻՐ ԽԱԶԻ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ԾՐԱԳՐԵՐԸ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԿՇԱՐՈՒՆԱԿՎԵՆ ՆԱԵՎ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՐՈՒՄ



Հանդիպման ընթացքում Ավետիք Փաշայանը ներկայացրել է Գեղարքունիքում ԿԽՄԿ կողմից 2025 թվականին իրականացված առողջապահական եւ միկրոտնտեսական աջակցությունների ուղղվածության ծրագրերի ընթացքն ու արդյունքները, ինչպես նաեւ 2026 թվականին սահմանամերձ ու թիրախային համայնքներում նախատեսվող աշխատանքները:

Ավետիք Փաշայանի հավաստմամբ՝ 2025 թվականի հիմնական ծրագրերը հաջողությամբ ավարտվել են, իսկ 2026-ին դրանք շարունակվելու եւ ընդլայնվելու են:

Քննարկվել են նաեւ առաջիկա տարվա ծրագրերի ուղղությունները, համագործակցության հնարավորությունները եւ մի շարք այլ հարցեր:

Մարզպետ Կարեն Սարգսյանը շնորհակալություն է հայտնել ԿԽՄԿ իրականացրած աշխատանքների համար եւ վստահեցրել, որ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմը 2026 թվականին եւս պատրաստ է աջակցել ծրագրերի արդյունավետ իրականացմանը:

«Գեղամա աշխարհ»

Գեղարքունիքի մարզի սահմանամերձ բնակավայրերում Կարմիր խաչի միջազգային կոմիտեի ծրագրերը կշարունակվեն նաեւ 2026 թվականի ընթացքում:

Դեկտեմբերի 12-ին Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանն ընդունել է Հայաստանում Կարմիր խաչի միջազգային կոմիտեի քաղաքական եւ գործառնական խորհրդակցական Ավետիք Փաշայանին:

ԾԱԿՔԱՐԻ ԱԱՊԿ ՆՈՐ ՇԵՆՔ Է ԿԱՌՈՒՑՎՈՒՄ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծակքար գյուղում 2025 թվականի հոկտեմբեր ամսից «Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի» պատվիրատվությամբ մեկնարկել եւ ընթանում են առողջության առաջնային պահպանման

կենտրոնի նոր շենքի կառուցման աշխատանքները: Ի Ծակքարի ԱԱՊԿ նոր շենքի կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 144 միլիոն դրամ:

2025 թվականի դեկտեմբերի 23-ի դրությամբ արդեն ավարտված են նկուղային ու առաջին հարկերի կառուցման աշխատանքները, այժմ ընթանում է տանիքի կառուցումը: Շինարարությունն արդեն իրականացված է շուրջ 40 տոկոսով:

Շինաշխատանքները նախատեսվում է ավարտի հասցնել 2026 թվականի ընթացքում:

Դեկտեմբերի 23-ին Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը եւ Մարտունի համայնքի ղեկավար Յովհաննես Յովեյանը մշտադիտարկում են իրականացրել Մարտունի համայնքի Ծակքար գյուղի ԱԱՊԿ նորակառույց շենքի շինիրապարակում:

Գեղամա աշխարհ



ԱՐԵՎԱՏԱՂՁ ՀԵՔԻԱԾ



Արեւն հրավարու, մարմնով իր հսկա երթով հաստատուն, անկանգ, անմոլոր, վառվորուն դեմքով, փայլով հրաշյա Բոցավառուն է մոզական գույներ Գեղամա անծիր լեռնավահանում, Ամպերի պես-պես դեգերի վրա եվ արքայական ու հանդիսավոր Մտնում ծոցն Յողի՝ սիրել-սիրվելու... Գիշերն իջնում է լույ նրա համար, Որ իր քողարկիչ սավանը վրո կյանքի եռացող կրքերի վրա, Յրի եւ Յողի քնքուշ մերձեցման երկունքախորհուրդ ակնթարթների... Գրկախառնումից Յողն է դողդում, Տրոփյունները սիրող սրտերի ժայռեր են ճեղքում, եթերը բռնում, Տիրաբար սստուն թւերին Յովի, Նրա հետ շրջում լեռնածերպերին: Իսկ ծաղիկները տարփանքի ժամին, Բռնած լեռ ու ծոր, գետափ ու կածան, Երբ որ գիշերն է աշխարհին տիրում, Կոկոններն իրենց թարմ ու գեղանի Յրաշքի նման, շքեղ են բացում Անըմբռնելի մի ակնթարթում, Որ ոչ մի էակ գաղտնիքը Գոյի Չմատնի նենգ ու դավադիր Չարքին, Ո՛ր արարչական, գորավոր Ոգին Գետնից հըքնաբավ երկինքը հեռանա... Յետո Արեւն է վեհորեն ելնում Յողի շիկացած, սրբատես գրկից, Կայտառ ու պայծառ պատանու նման, Առնական տեսքով ու գեղեցկացած, Լեռան թիկունքից ցոլքերն իր հանում, Ապա գրավում երկինքը հանկարծ: Յայրանում է նա, Յողը մայրանում, Կյանքն է բռնկվում մեկեւն ու նորից... Մի պահ, լույս դարձած, ծուլվել Արեւին, Եղել են այս սուրբ Յեքիաթին վկա, Որ Արիական դարերից պատմեմ, Դիցերից սերված Յայկազուններից, Որ Յող-հայրենին ինձնով ապրեցնեմ Արեւից սերված ու Արեւաբաղձ...

Խոսարով Խլղաթյան
24.12.2025
Ք. Գավառ

ԾՈՎԱԶԱՐԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒ ՊԱՏՄԱՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԱՔՎԱԾ ՇՔԵՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Եղեգնյա գրչով երգեցի փառքեր
Քե՛զի ընծա՛ , հին հայրենիք...
Դանիել Վարուժան
Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Ծովազարդ գյուղի եկեղեցու ավերակներն իրենց մեջ հնագիտական ու պատմաճարտարապետական անհատուն շքեղություններ են թաքցնում, ընդ որում, ոչ պակաս շքեղ, քան Հայաստանի բազմաթիվ հանրաճանաչ պատմական հուշարձանների դեպքում է: Պարզապես այս հուշարձանը գիտական ու հանրային շրջանակներին առայժմ շատ քիչ է հայտնի՝ անհրաժեշտ ծավալի ուսումնասիրությունների ու հանրահռչակման բացակայության պատճառով:

Պատմաճարտարապետական նշանակության այս հուշարձանը գտնվում է գյուղի կենտրոնական հատվածում, միջնակարգ դպրոցի շրջակայքում, Սեւանա լճից մի քանի հարյուր մետր հեռավորությամբ, շրջակայքի վրա իշխող դիրք գրավող բարձունքի վրա: Նույնիսկ մինչ այժմ անհայտ է եկեղեցու



ամունը եւ կառուցման ստույգ թվականը: Հուշարձանների պահպանության պետական ցանկում այս եկեղեցին նշված է որպես 17-18-րդ դարերի կառույց՝ հիմք ունենալով տարածքի տապանագրերի վրա եղած արձանագրությունները, մի բան, որ ընդհանրապես աղերս չունի հոգեւոր այս շինության հիմնադրման ժամանակագրության հետ, քանի որ ավերակների մեջ պահպանված, ապա 2010 թվականին իրականացված պեղումների շնորհիվ ի հայտ եկած ճարտարապետական տարրերը եւ խեցեգործական իրերը բոլորովին նոր իրողություններ են բացահայտում՝ եկեղեցու հիմնման ժամանակաշրջանը տանելով առնվազն դեպի վաղ միջնադար:

Հայ պատմագրության մեջ Ծովազարդի եկեղեցուն առաջին անգամ անդրադարձել է Սեւորոպ արքեպիսկոպոս Սմբատյանը՝ իր նշանավոր «Տեղագրություն Գեղարքունի Ծովազարդ գավառի» աշխատության մեջ:

/շարունակությունը՝ էջ 4-ում/

Գավառ համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանն աշխատանքային շրջայց է իրականացրել Գավառ համայնքում:

Այցի նպատակն էր՝ դիտարկել կատարված աշխատանքները եւ 2026 թվականի բյուջեի նախագիծը կազմելուց առաջ առկա խնդիրները վերհանել եւ հնարավորության սահմաններում դրանք ներառել բյուջեում:

Վարչական եւ բնակավայրերի համայնքապատկան կառույցների ղեկավարների հետ Գուրգեն Մարտիրոսյանը եղել է բոլոր հաստատություններում, դիտարկել առկա խնդիրները, լսել ներկայացված առաջարկները եւ հանձնարարել զույրագրել դրանք: Հիմնախնդիրները հիմնականում մանկապարտեզների, երաժշտական, արվեստների դպրոցների, մշակույթի տների, վարչական ղեկավարների նստավայրերի շենքերի, դրանց բակային տարածքների հիմնանորոգմանն ու բարելավումն էին առնչվում: Բարձրացվել են ճանապարհաշինության, արոտների ջրարբիացման եւ մի շարք այլ ոլորտների հետ կապված հարցեր:

Ծովագարդում Գուրգեն Մարտիրոսյանն այցելել է մշակույթի տուն եւ մանկապարտեզ, դիտարկել առկա ոչ



բավարար պայմանները, տեղում քննարկել հնարավոր լուծումները:

Լծափում համայնքի ղեկավարը ծանոթացել է Արցախյան պատերազմերում զոհված հայորդիների հիշատակը հավերժացնող հուշարձանի տարածքի շինարարական աշխատանքներին, որոնք կատարվում են համայնքի 2025 թվականի բյուջեի միջոցներով: Գուր-

գեն Մարտիրոսյանն այցելել է նաեւ շենքային անբարենպաստ պայմանների պատճառով չգործող մշակույթի տուն:

Հայրավանքում այց է կատարվել մշակույթի տուն, որի մի հատվածն օգտագործվում է որպես վարչական ղեկավարի նստավայր եւ գործող խմբակների համար հարմարեցված տարածք: Պայմանավորվածություն է ձեռք բերվել բարելավելու առկա պայմանները:

Նորատուսում Գուրգեն Մարտիրոսյանը այցելել է գործող երկու մանկապարտեզներ եւ արվեստի դպրոց: Այս հաստատությունների տնօրենները ներկայացրել են շենքային պայմանների եւ տարածքի բարելավման աշխատանքների հետ կապված առաջարկներ, որոնք արժանազանվել են:

Այց է կատարվել Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, որի տարածքը համայնքի բյուջեի միջոցներով բարեկարգվել է, կահավորվել եւ լուսավորվել: Գուրգեն Մարտիրոսյանը գրուցել է բնակիչների հետ եւ լսել նաեւ նրանց առաջարկությունները:

Շրջայցի հաջորդ կանգառը Կարմիրգյուղում է եղել: Այստեղ դիտարկվել է չգործող մշակույթի տան շենքի վիճակը եւ քննարկվել բնակավայրում մշակութային կյանքն ակտիվացնող կառուցի հիմնանորոգման հարցը, արվեստի դպրոցում էլ ուսումնասիրվել են շենքային պայմանները եւ քննարկվել դրանց բարելավման ուղղությամբ իրականացվելիք աշխատանքները:

Գանձակում ուսումնասիրվել են մանկապարտեզի շենքային եւ բակային տարածքի պայմանները: Դրանց բարելավման ուղղությամբ եւս տրվել են հանձնարարականներ:

Գեղարքունիքում, Լանջաղբյուրում եւ Սարուխանում եւս այցեր են կատարվել համայնքապատկան կառույցներ եւ պայմանավորվածություններ ձեռք բերվել դրանց պայմանների բարելավման աշխատանքները ընդգրկել առաջիկայում իրականացվելիք ծրագրերում:

Ավարդ Մանուկյան

ԿԱՄՐԱՑՎԻ ԵՎ ԿԿԱՌՈՒՑԱԳԱՏՎԻ ԳԱՎԱՌԱՍԳԵՏԻ ՀՈՒՆԸ

ՀՀ կառավարության կողմից տրամադրված միջոցների հաշվին 2026 թվականից Գավառ համայնքի բնակավայրերով հոսող Գավառագետի հունը կամրացվի եւ կկառուցապատվի:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի եւ Գավառի համայնքապետարանի աշխատակազմերից, այդ նպատակով ՀՀ կառավարությունն արդեն հատկացրել է 464 միլիոն 964 հազար դրամ:

Գավառագետի՝ բնակավայրերով հոսող որոշ հատվածներում դժվար է զանազանել, թե որն է հունը, որը՝ ափը: Խոտով, քիչերով, տեղ-տեղ էլ անզան ծառերով ծածկված հունը հատկապես զարմանալի վարարումների ժամանակ հեղեղային իրավիճակ է ստեղծում: Արդյունքում՝ տուժում են ափամերձ տնտեսություններն ու ենթակառուցվածքները, ներկայացրել է Գավառ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Գրիգոր Դաշտոյանը:

2022 թվականին Գավառ համայնքի բնակիչներն այդ հարցը բարձրացրել էին: Մենք հետո համայնքապետարանի հետ քննարկում ունեցանք, եւ իրենք գրավոր դիմեցին մեզ, որպեսզի մենք միջնորդենք, որ կարողանանք Գավառագետի հունի մաքրման եւ ամրացման աշխատանքներ իրականացնել: Պայմանավորվեցինք, որ համայնքապետարանը նախագիծ ձեռք կբերի, եւ կփորձենք կառավարության միջոցներով, պետբյուջեի միջոցներով այդ ծրագիրն իրականացնել: Համայնքապետարանի հետ միասին մեկ ամբողջական նախագիծ ենք իրականացրել, որ մեկընդմիջտ լուծենք այդ հարցը: Իհարկե, հետագայում եւս պետք կլինի մաքրման աշխատանքներ իրականացնել, բայց հունի ամրացման ու մաքրման աշխատանքները առաջիկա տարիների համար բավականին լավ արդյունք կտան, ներկայացրել է Գեղար-

քունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը:

Պետական միջոցներով իրականացվելիք ծրագիրը, մաքրման աշխատանքներից զատ ներառելու է նաեւ ենթակառուցվածքների վերականգնում եւ բարեկարգում, լուծելու է բնապահպանական մի շարք խնդիրներ:

2024 թվականին Գավառի համայնքապետարանը սկսեց Գավառագետի Գեղարքունիք գյուղից մինչեւ Նորատուս ընկած հատվածներում առկա խնդիրների զույրագումը: Դրա հիման վրա արդեն 2025 թվականին պատրաստ էին գետի հունի մաքրման եւ ամրացման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը: Համայնքի ղեկավարը կարողացավ ներկայացնել հիմնախնդիրը, որից հետո արդեն Գեղարքունիքի մարզպետի միջնորդությամբ այն ներկայացվեց ավելի վերին ատյաններ՝ ՀՀ Ջրային կոմիտե, Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարություն, եւ, ի ուրախություն մեզ, Գավառագետի մաքրման ծրագիրը ֆինանսավորվել է 2026 թվականի պետական բյուջեի միջոցներով: Գեղարքունիք-Լանջաղբյուր շուրջ 3 կմ երկարությամբ ձգվող հատվածում պետք է գետի մաքրում իրականացնել, վթարային մեկ կամուրջի վերականգնում, գետից ծառերի հեռացում, վնասված եւ փլուզված ափապաշտպան հենապատի կառուցում: Նման



կարգի աշխատանքներ կիրականացվեն նաեւ մնացած հատվածներում, մի քանի կիլոմետր երկարությամբ: Այսինքն մենք քարտեզագրել ենք բնակավայրերի միջեւ եղած գետի ամբողջ երկայնքով խնդիրները, որոնք կլուծվեն ամբողջությամբ: Նախագծով նախատեսված հիմնական աշխատանքների ավարտին, անհարաժեշտության դեպքում գետի տարբեր հատվածներում կտեղադրվեն նաեւ աղբորսիչներ, հավաստել է Գրիգոր Դաշտոյանը:

Աճախտ Կարեյան

ԾՈՎԱԿՈՒՄ ԽՄԵԼՈՒ ԶՐԱՏԱՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՐԿՈՒ ԾՐԱԳԻՐ Է ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ



Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Ծովակ գյուղում ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում խմելու ջրատարի ներքին ու արտաքին ցանցեր են կառուցվել 3560 գծամետր ընդհանուր երկարությամբ:

Ինչպես տեղեկացրեց Ծովակի վարչական ղեկավար Ռուբեն Ղանդիյանը, խմելու ջրատարի ներքին ու արտաքին ցանցերը կառուցվել են սուբվենցիոն 2 տարբեր ծրագրերով, որոնց արդյունքում Ծովակում ոչ միայն բարելավվել է խմելու ջրի մատակարարումը, այլ նաեւ 6-րդ թաղամասի 50 տնտեսությունների

համար հիմնովին լուծվել է խմելու ջրի մատակարարման խնդիրը, որն առկա էր վերջին մի քանի տասնամյակների ընթացքում:

Ծովակի խմելու ջրագծի կառուցման առաջին ծրագրի պայմանագրային արժեքը կազմել է 50 միլիոն 655 հազար դրամ, որի 75 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 25 տոկոսը՝ Վարդենիսի համայնքապետարանը: Ծրագրով նախատեսված է խմելու ջրատարի արտաքին ցանցի կառուցում Լճավանի աղբյուրակապից դուրս եկող հատվածում 1010 գծամետր երկարությամբ եւ ներքին ցանցի կառուցում 6-րդ թաղամասում, 1000 գծամետր երկարությամբ, պոլիէթիլենային խողովակներով: Կառուցման ընթացքում ի հայտ եկած խնդիրների պատճառով նախագծում կատարված փոփոխության արդյունքում լրացուցիչ կառուցվել է եւս 400 գծամետր ջրագիծ, կան 2400 գծամետր ընդհանուր երկարությամբ 1960-ական թվականներին կառուցված ջրատարի ազբեստյա խողովակներն ամբողջությամբ փոխարինվել են պոլիէթիլենային խողովակներով:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2025 թվականի օգոստոսին եւ ավարտվել նույն տարվա նոյեմբերին:

Ծովակի խմելու ջրատարի կառուցման սուբվենցիոն

երկրորդ ծրագրի պայմանագրային արժեքը կազմել է 20 միլիոն դրամ, որի 75 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 25 տոկոսը՝ Վարդենիսի համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է խմելու ջրատարի ներքին ցանցի կառուցում Ծովակի գերեզմանոցի թաղամասում, 1160 գծամետր ընդհանուր երկարությամբ, պոլիէթիլենային խողովակներով: Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2025 թվականի օգոստոսին եւ ավարտվել նույն տարվա նոյեմբերին:

Շինարարական աշխատանքներն իրականացրել է «Արտ Պլաս» ՍՊԸ-ն:

Իրականացված երկու ծրագրերի շնորհիվ Ծովակում մեծ մասամբ կարգավորվեց խմելու ջրի մատակարարման խնդիրը: Ավելին, 6-րդ թաղամասի 50 տնտեսությունները, որոնք տասնամյակներով իսպառ ջրամատակարարում չեն ունեցել ու ջուր են կրել մոտակա թաղամասերից, արդեն օգտվում են շուրջօրյա ու որակյալ ջրամատակարարումից: Իսկ Լճավանի աղբյուրակապից սնուցվող ջրատարի ու գերեզմանոցի տարածքի ջրատարի ազբեստյա խողովակները, 2170 մետր ընդհանուր երկարությամբ, ամբողջությամբ փոխարինվել են պոլիէթիլենային խողովակներով, ինչի արդյունքում արդեն բացառվել են ջրի մեծաքանակ կորուստները, որ կային նախկինում: Ծովակի շուրջ 400 տնտեսություն համարվում են իրականացված երկու ծրագրերի շահառուներ: Այս պահի դրությամբ արդեն Ծովակի բոլոր տնտեսություններն ունեն շուրջօրյա ու որակյալ ջրամատակարարում, ներկայացրեց Ռուբեն Ղանդիյանը:

«Գեղամա աշխարհ»

ՃԱՄԱՐԱԿ ՔԱՂԱՔՈՒՄ «ՎՈՐՔԱՌԻՑ» ՏԵՍԱԿԻ ՄԱՐԶԱՀԱՐԱՊԱՐԱԿՆԵՐ ԵՆ ԿԱՌՈՒՑՎԵԼ

Գեղարքունիքի մարզի ճամբարակ քաղաքում այս տարվա ընթացքում ՀՀ կառավարության կողմից տրամադրված միջոցների հաշվին «Վորքաուք» տեսակի երեք մարզահրապարակ է կառուցվել, որոնց բացման արարողությունը տեղի է ունեցել այս երկուշաբթի:

Ինչպես տեղեկացրեց ճամբարակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ռոբերտ Օհանյանը, մարզահրապարակների բացման արարողությանը մասնակցել են Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Ջանիկ Բազեյանը, ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Հասմիկ Ավագյանը, Գեղարքունիքի մարզպետի և ճամբարակի համայնքապետարանի պատասխանատու աշխատակիցներ:

Միջոցառման շրջանակում Հայաստանի «Սթրիթ Վորքաուք» ֆեդերացիայի ատլետներն իրականացրել են ցուցադրական ելույթներ և բացօթյա անվճար մարզումներ՝ ներկաներին ցուցադրելով, թե ինչպես է պետք օգտվել մարզասարքերից և մարզվել բակային պայմաններում:

Որոշ մարզասարքեր նաև հարմարեցված են



առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց, մասնավորապես՝ շարժասայլակով տեղաշարժվողների համար:

-Կառավարությունն ավելի վաղ ընդունել էր որոշ-



ում նպատակ ունենալով նպաստել հանրության շրջանում «Վորքաուք» մարզահրապարակների բանակի ավելացմանը: Նպատակը փողոցային մարմնամարզությանը զբաղվելու մշակույթի ինտեգրումն է համայնքների սոցիալական միջավայրին, որպեսզի մարզումները եւ սպորտով զբաղվելն ընկալվեն որպես առօրյա կյանքի բաղկացուցիչ մաս: Նախատեսվում է նաև «Վորքաուք Ակադեմիա» կրթական ծրագրի շրջանակում դպրոցներում աշխատող ֆիզիկուլտուրայի ուսուցիչներից ընտրել 2 մասնագետ և կազմակերպել վերապատրաստման դասընթաց՝ «Վորքաուք» մարզաձևի ուղղությամբ գիտելիքների խորացման նպատակով:

«Վորքաուք» տեսակի 3 մարզահրապարակներից մեկը բացվել է Վերին ճամբարակ քաղաքում, երկրորդը՝ Բաղրամյան փողոցի բազմաբնակարան շենքերի բակում, երրորդը՝ ճամբարակ քաղաքի ֆուտբոլի խաղադաշտի եւ եկեղեցու հարող տարածքներում, - ներկայացրեց Ռոբերտ Օհանյանը: **«Գեղամա աշխարհ»**

ԼՃԱՎԱՆ ԳՅՈՒՂԸ ԿԱՊԱՀՈՎՎԻ ԽՄԵԼՈՒ ԶՐԻ ՇՈՒՐՁՈՐՅԱՆ ՄԱՍԱԿՆԻՍՏԱՐԱՐ



Ծրագրով նախատեսված է Լճավանի խմելու ջրատարի արտաքին ցանցի կառուցում 15 կիլոմետր 200 մետր երկարությամբ, պոլիէթիլենային խողովակներով:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2025 թվականի սեպտեմբերից և ղեկավարվում է 10-ի դրությամբ իրականացվել շուրջ 80 տոկոսով: Շինարարությունն իրականացնում է «Արտ Պլաս» ՍՊԸ-ն: Ջրատարի կառուցումը նախատեսվում է ավարտել 2025 թվականի ընթացքում:

Ծրագրի շահառու են հանդիսանում Լճավանի բոլոր բնակիչները:

-Լճավանի խմելու ջուրը մատակարարվում է պոմպերի միջոցով, ինչը չափազանց ծախսատար է, ուստի եւ գյուղի ողջ բնակչությունը խմելու ջուր է ստանում օրական երկու ժամի չափով: Սակայն այս ծրագրի ավարտից հետո, երբ նորակառույց խմելու ջրատարը կմիացվի օրվա կարգավորիչ ջրամբարին արդեն գործելով ինքնահոս եղանակով, ունենալու ենք շուրջօրյա ու միանգամայն որակյալ ջրամատակարարում ու էլեկտրաէներգիայի խնայում, ինչին ողջ գյուղը մեկ դարից ավելի է սպասել: Նաև այն է ուրախալիք, որ նախորդ տարիների ընթացքում տարբեր ծրագրերով անբողջովին կառուցվել է խմելու ջրատարի ներքին ցանցը, ինչի շնորհիվ խմելու ջուրը տնտեսություններին կմատակարարվի անկորուստ ու միանգամայն մաքուր վիճակում, - ներկայացրեց Լյովա Գեւորգյանը: **«Գեղամա աշխարհ»**

ԱՐԾՎԱՆԻՄՏԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՀԻՄՆԱՆՈՐՈՎՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԵՆ ՇՈՒՐՁ 70 ՏՈՎԱՆՈՎ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Արծվանիստ գյուղի մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքների մեկնարկը տրվել է այս տարվա ապրիլից, ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացված սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, Արծվանիստի մանկապարտեզի հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 216 միլիոն դրամ, որի 75 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 25 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է շենքի հիմքերի ուժեղացում ու առաջին հարկի առաստաղի ամրացում, 2 կցակառույց, ներքին ու արտաքին հարդարում, սանհանգույցի կառուցում, նոր գույքի ձեռքբերում, բակային հատվածի բարեկարգում, այլ աշխատանքներ:

2025 թվականի դեկտեմբերի 17-ի դրությամբ իրականացված է շինաշխատանքների շուրջ 70 տոկոսը. ավարտված են շենքի հիմքերի ուժեղացման, առաջին հարկի առաստա-



ղի ամրացման, 2 կցակառույցների կառուցման, ներքին ու արտաքին հարդարման աշխատանքները: Սանհանգույցների կառուցման, նոր գույքի ձեռքբերման, բակային հատվածի բարեկարգման աշխատանքները կիրականացվեն 2026 թվականի ընթացքում:

Շինարարության ավարտի ժամկետ է նշվում 2026 թվականի օգոստոսը:

Դեկտեմբերի 17-ին Արծվանիստի մանկապարտեզի շինարարական մշտադիտարկում են իրականացրել Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը և Մարտունի համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանը:

«Գեղամա աշխարհ»

ՍԱՐՈՒԽԱՆՈՒՄ ՈՌՈՎՄԱՆ ԵՎ ԶՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀՃԱՄԱԿԱՐԳ Է ԿԱՌՈՒՑՎՈՒՄ



Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Սարուխան գյուղում ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում սկսվել է շարունակվում են ոռոգման եւ ջրահեռացման համակարգի կառուցման աշխատանքները:

Սարուխանի ոռոգման եւ ջրահեռացման համակարգի կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 14 միլիոն 500 հազար դրամ, որի 75 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 25 տոկոսը՝ Գավառի համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է Արտավազ Բիշոյան, Ջորավար Անդրանիկ եւ Խոստեղյան փողոցներում ոռոգման եւ ջրահեռացման համար կառուցում 460 մետր ընդհանուր երկարությամբ, երկաթբետոնյա կիսախողովակներով, անցումներում՝ մետաղական խողովակներով: Արտավազ Բիշոյան փողոցում համակարգը ծառայելու է ոռոգմանը, իսկ Ջորավար Անդրանիկ եւ Խոստեղյան փողոցներում, ոռոգմանը զուգահեռ, նաև ջրահեռացմանը: Աշխատանքները մեկնարկել են նոյեմբերին եւ կավարտվեն մինչև տարեվերջ:

Ծրագրի իրագործմամբ Սարուխանում շուրջ 200 տնտեսություն հնարավորություն կունենան ոռոգելու ավելի քան 50 հեկտար տնամերձ հողատանա: Համակարգի միջոցով ջուրն արդեն առանց կորուստների կհասնի հողագործին:

Ավարդ Սանուկյան

ԳԵՂԱՄԱՎԱՆՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԵԼ Է ԽՄԵԼՈՒ ԶՐԻ ԽՈՐՔԱՅԻՆ ՀՈՐՎԵՐՆԱՌՈՒՑՎԵԼ ԽՄԵԼՈՒ ԶՐԱՏԱՐԻ ՆԵՐՔԻՆ ՑԱՆՅԸ

Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքի Գեղամավան գյուղում ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում կառուցվել է խմելու ջրի խորքային հոր, վերակառուցվել խմելու ջրատար ներքին ցանցը:

Ինչպես տեղեկացրին Սեւանի համայնքապետարանի աշխատակազմից, Գեղամավանի խորքային հորի կառուցման եւ խմելու ջրատար ներքին ցանցի վերակառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմել է 37 միլիոն 770 հազար դրամ, որի 75 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 25 տոկոսը՝ Սեւանի համայնքապետարանը:

Աշխատանքները ներառել են 3251 գծամետր ջրագծի վերակառուցման եւ խորքային հորի կառուցման բաղադրիչներ: Կառուցվել է խորքային հորի սանիտարական գոտու ցանկապատ:

Գեղամավանում իրականացվող ծրագրի կապալառումն «ԱՄ-777» ՍՊԸ-ն է:

Կենսական նշանակություն ունեցող այս ենթածրագրի շնորհիվ հնարավոր է դառնում լուծել բնա-



կավայրում տասնամյակներ շարունակ առաջնահերթություն ներկայացնող խնդիրը, որը նպաստելու է բնակիչների կյանքի որակի եւ կենցաղավարության բարելավմանը:

Արմինե Դուկասյան

ԼՈՒՍԱԿՈՒՆԲՈՒՄ ԽՄԵԼՈՒ ԶՐԱՏԱՐ ՑԱՆՅ Է ԿԱՌՈՒՑՎՈՒՄ

Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Լուսակունք գյուղում ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում խմելու ջրատարի արտաքին եւ ներքին ցանց է կառուցվում:

Ինչպես տեղեկացրին Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմից, Լուսակունքի խմելու ջրատարի կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 116 միլիոն 275 հազար դրամ, որի 75 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 25 տոկոսը՝ Վարդենիսի համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է խմելու ջրատարի

արտաքին ու ներքին ցանցի կառուցում 4500 գծամետր ընդհանուր երկարությամբ, պոլիէթիլենային խողովակներով:

Շինարարական աշխատանքները սկսվել են 2025 թվականի օգոստոսից և ղեկավարվում է 25-ի դրությամբ իրականացվել շուրջ 90 տոկոսով: Շինարարությունը նախատեսված է ավարտի հասցնել 2025 թվականի ընթացքում:

Շինարարական աշխատանքներն իրականացնում է «Արտ Պլաս» ՍՊԸ-ն:

Ծրագրի շահառու են հանդիսանում Լուսակունք գյուղի բոլոր տնտեսությունները:

«Գեղամա աշխարհ»

ԾՈՎԱԳԱՐՈՒԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒ ՊԱՏՄԱՀԱՐԱՐԱԳԵՏԱԿԱՆ ԹԱԲՆԱԿԱՆ ԵՔԵՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Այկիզը եջ 1-ում/

«Ալեքսանդրովկայից գնացինք քանի վերստ առաջ՝ հասանք Էֆենդի անունով թուրքաբնակ գյուղը. ուր եւ եկեղեցվո եւ խաչի նշան չգտնելով՝ անցանք եւ բավական առաջ գնալով՝ հասանք Յաջի Մուխան անունով թուրքաբնակ գյուղը՝ որին եւ Յայերը Աջամ խան անվանեն պարսիկ Նադի խանը այն տեղ բնակվելու համար, հեռացնելով Յաջի Մուխան տաճկին 1700 թվին: Յաջի Մուխանուն կար մի եկեղեցի սրբատաշ քար ու կրով շինած՝ միայն որմունքն կանգուն: Եկեղեցվո հյուսիսային որման կամարի վերա գրված էր հին եւ անձե գրով այսպես. «Աստված ողորմի Սարգսի եւ Ալեքսոյի եւ Յակոբա եւ ծնողացն յուր: Ստա թե»: Եկեղեցվո միջին հարավային որման կից խաչքարի վերա գրված էր. «Ես Ովանեսս կանկնեցի սուրբ զխաչս ի փրկութիւն հոգւոյն իմո, հիշեցեք ի Քրիստոս»: Եկեղեցուց դուրս մի խաչ քարի վերա գրած. «Սուրբ խաչս բարեխոս Պեկնագարին»: Մի գերեզմանի վերա գրած. «Այս է հանգիստ Գրիգորի. թվ. ՌՅԾ. (1701)»: Մյուս գերեզմանի վերա. «Այս է հանգիստ Մկրտչին. ՌՅ. (1651)»: Մի ուրիշի վերա. «Այս է հանգիստ Էնգագարին. թվ. ՌՅԾ. (1701)»: Մի ուրիշի վերա. «Այս է հանգիստ Աճապին»: Եվ մի ուրիշի վերա. «Այս է հանգիստ Գասպարին»: Կային եւ քանի գերեզմաններ ղփարընթերց գրվածքով, առանց թվականի», - գրում է Մեսրոպ Սմբատյանը:

Մեսրոպ Սմբատյանցն իր հայտնի աշխատությունը գրել է 1862-1895 թվականների շրջագայությունների արդյունքում:

Ծովագարոի եկեղեցու մասին հաջորդ տեղեկությունը հաղորդում է անվանի հնագետ Երվանդ Լալայանը, ով Սեւանի ավազանի բնակավայրերում շրջագայել է 1910-ական թվականներին: «Յաջի-Մուխան կամ Յաջի-Ավդի եւ կամ Աճամ-խան. այս գյուղը Յաջի-Մուխան է կոչվել այն պատճառով, որ 1700 թվին տաճկաց Յաջի Մուխան զորապետն այստեղ բանակ է դրել, եւ երբ նրան հալածելով այստեղ կանգ է առել Յաջի Ավդի պարսից զորապետը, վերակոչվել է Յաջի-Ավդի կամ Աճամ խան: Յնուն այն հայկական գյուղ է եղել, թեւ ամունը հայտնի չէ, որովհետեւ այստեղ կան մի ավեր եկեղեցի եւ մի քանի խաչքարեր: Եկեղեցու վրա եղել են հետեւյալ արձանագրությունները, որոնք որ այժմ բոլորովին ոչնչացրել են. «Աստված ողորմի Սարգսի եւ Ալեքսոյի եւ Յակոբայ ծնողացն իւր. Ստաթե»: խաչքարի վրա. «Ես, Ովանեսս կանկնեցի սուրբ խաչս ի փրկութիւն հոգւոյն իմոյ. յիշեցեք ի Քրիստոս»: «Սուրբ խաչս բարեխոս Պեկնագարին»:



Գերեզմանաքարերի վրա. «Այս է հանգիստ Գրիգորի, թվ 1701», «Այս է հանգիստ Մկրտչին, թվ 1651», «Այս է հանգիստ Էնգագարին, թվ 1701», «Այս է հանգիստ Գասպարին»:

Ծովագարոի եկեղեցու եւ նրա շրջայնի գերեզմանոցի խաչքար-տապանաքարերի վրա պահպանված արձանագրություններին անդրադարձել է անվանի հնագետ-վիմագրագետ Սեդրակ Բարխուդարյանը իր հեղինակած «Դիվան հայ վիմագրության» կոթողային աշխատության մեջ:

Կարելի ասել, որ այս դեպքում էլ պատմաձևակուսային շերտերով հարուստ այս հուշարձանի մասին տեղեկությունները շատ ժխտ են՝ չհաշված վիմագրերի ընթերցումները, ըստ որոնց՝ Ովանեսի խաչքարը թվագրվում է 16-րդ դարով, Դեովլաթի տապանաքարը՝ 1679 թվականով, մի խաչքարի արձանագիր բեկորը՝ 1671 թվականով, Յակոբի շիրմաքարը՝ 1675 թվականով եւ Մկրտչի տապանաքարը՝ 1551 թվականով: Վերծանված են նաեւ մի քանի անթվագիր գերեզմաքարերի վրա պահպանված անունները՝ Սուսան, Աղայբաբ: Սակայն հնագետի վերջնական եզրահանգմամբ Ծովագարոի եկեղեցու հիմնադրումը վերագրվում է վերջին դարերին, այսինքն ուշ միջնադարին:

«Գյուղում կա մի կիսավեր, մեծ ու թաղակապ եկեղեցու մնացորդ, որի շուրջն ընդարձակ գերեզմանատուն է: Թե եկեղեցին իր ձեւերով, եւ թե տապանագրերը վերաբերում են վերջին դարերին, - գրում է Սեդրակ Բարխուդարյանը:

Իրականում, սակայն, այս եկեղեցու եւ նրա շրջակայքի ավերակների մեջ, նույնիսկ հողի շերտի տակ, շատ ավելի հզոր պատմաձևակուսային շերտեր են եղել թաքնված, որոնց ի հայտ գալով հսկայական



բացահայտումներ են կատարվել ու նոր ուղղումներ մտցվել այս հուշարձանի գոյության ու շարունակականության պատմության մեջ: Ու այս ամենը՝ շնորհիվ 2010 թվականին այստեղ կատարված հնագիտական պեղումների, որն իրականացվել է ՀՀ ՊԱՍ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի միջին դարերի հնագիտության բաժնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, հնագետ Հուսիկ Մելքոնյանի կողմից:

Պեղումների պատվիրատուն Ծովագարոի համայնքապետարանն է եղել, նախաձեռնողը՝ Ծովագարո գյուղի բնակիչ, գործածար Փայլակ Յարապետյանը, ով եկեղեցին իր պատմաձարտարապետական նախկին տեսքի մեջ վերականգնելու ցանկություն ու նպատակ է ունեցել:

Բնական է, որ Ծովագարոի եկեղեցու մասին կցկտուր, ոչ լիարժեք տեղեկությունները Մեսրոպ Սմբատյանցը, Երվանդ Լալայանն ու Սեդրակ Բարխուդարյանը թողել են հայանցիկ զննության կամ ուսումնասիրության արդյունքում, մինչդեռ Հուսիկ Մելքոնյանի տեսական ու ջանադիր աշխատանքը, մասնագիտական պրպտումները փաստագրական հսկայական նյութ են տալիս հուշարձանի ճարտարապետական նախնական շքեղ տեսքի, չափսերի, ժամանակագրության փուլերի, բազմաշերտության, այլ մանրամասների մասին: Միայն թե այն տարբերությամբ, որ վերոնշյալ հեղինակների կողմից նկարագրված եկեղեցու շուրջ տարածված ընդարձակ գերեզմանատնից պեղումների ժամանակ ընդամենը պահպանված են եղել առանձին հատվածներ:

Հուսիկ Մելքոնյանի վկայությամբ նախքան պեղումները գետներես պահպանված են եղել կառույցի հյուսիսային եւ հարավային պատերի որոշ հատվածները եւ արեւելյան կողմում գտնվող ավագ խորանի մի մասը, որը նախորդ դարի ընթացքում վերածված է եղել մատուռի, ուր մարդիկ եկեղեցական տոներին կատարել են իրենց ուխտն ու մոնոկառությունը:

Մաքրման աշխատանքներից առաջ եկեղեցին թե՛ ներքուստ, թե՛ արտաքուստ ծածկված է եղել մեկից մինչեւ երկու մետր բարձրության հողի շերտով: Կառույցի ներսում, գետներես, պահպանված են եղել մի քանի տապանաքարեր, որոնցից երեքը՝ արձանագրությամբ: Սրանցից մեկը կրում է 1680, երկրորդը՝ 1708 եւ երրորդը՝ 1919 թվականը:

«Իրականացված թաղումների ստույգ թվականները հավաստում են, որ առնվազն 17-18-րդ դարերի սահմանագլխին ուսումնասիրվող կառույցն ավերակ էր եւ հողով լցված, ուր եւ կատարվել են հիշյալ թաղումները: Թաղումներ բացվեցին նաեւ եկեղեցին ներքուստ մաքրելուց հետո: Դրանք հարթ, առանց հարդարանքի, հիմնականում կանոնավոր կտրված ուղղանկյուն սալաքարեր են: Դատելով հատակագծային լուծումներից՝ եկեղեցին միանավ, թաղակապ շինություն է: Սակայն, նկատի ունենալով այն պարագան, որ պատերին կից առկա են բավական հզոր, ամուր որմնամույթեր, նաեւ այն, որ որմերի լայնությունը հասնում է 170-180 սանտիմետրի, ապա չպետք է բացառել, որ այն կարող էր նաեւ գմբեթ ունենալ: Այս եզրահանգման է բերում նաեւ այն պարագան, որ տեղում պահպանվել են նաեւ թաղերի, եւ հնարավոր է, թմբուկի քարեր: Եկեղեցին շարված է տեղական բազալտի կոփած քարերով եւ կրաշաղախով: Իբրեւ շաղախ օգտագործվել է նաեւ կավը եւ հողը: Կառույցի միայն կոնստրուկտիվ, կրող հատվածները, կամարներն ու պատերի վերին մասերն են շարված սրբատաշ տուֆի տարբեր երանգ ունեցող քարերով: Համաձայն Ս. Մնացականյանի այս տիպին անցնելը բացատրվում էր նրանով, որ այն բավական պարզ էր եւ նյութական մեծ ներդրումներ չէր պահանջում: Այս առումով Ծովագարոի եկեղեցին դասական օրինակ կարելի է համարել: Եկեղեցին կառուցվել է հարմարեցնելով տեղանքի թեք դիրքին: Այն որոշ հատվածներում դրված է ժայռեղեն հիմքի վրա, իսկ հիմնականում՝ հողի: Հարավից եւ հարավարեւելյան մասից եկեղեցին բարձրացրած է երկաստիճան որմնաեղջի վրա: Սեւանի ավազանի 9-11-րդ դարերի բազմաթիվ հուշարձան-

ներ շարված են բազալտի կոպտատաշ քարերով: Դրանք հիմնականում միջին չափի, ճակատային մասում քառակուսի, թեթոթյամբ սրացող, երկարավուն քարեր են: Ընդունված շինարարական տեխնիկայի կանոնների համաձայն անկյունների քարերն ավելի խոշոր են եւ լայն մշակված: Նույնը կարելի է ասել նաեւ մուտքերի ճակատակալ քարերի վերաբերյալ: Այսպես, գտնվել է կառույցի արեւմտյան մուտքի բարավորը, որի մակերեսը եւ ստորին մասը լավ հղկված են: 80 x168 չափեր ունեցող սալաքարի մակերեսին երկու պարզ խաչքանդակներ են», - պեղումների արդյունքների մասին գրավոր եզրակացության մեջ նշել է Հուսիկ Մելքոնյանը:

Պեղող հնագետը, հենվելով Ստեփան Մնացականյանի մասնագիտական կարծիքի վրա, գտնում է, որ Ծովագարոի եկեղեցին կառուցված է վաղագույն 5-7-րդ դարերի ճարտարապետաշինարարական ավանդույթներով ունենալով իր նախաօրինակը:

«Սրա վառ ապացույցը կարելի է համարել կառույցի քիվի քարերից մեկը, պատուհանի պսակի քարերի մնացորդները եւ թեւավոր խաչերի ու խոյակի բեկորները, եւ որ ամենակարեւորն է, կառույցի հատակագծային լուծումը, որը մեզ հիշեցնում է վաղ միջնադարի մի շարք ճարտարապետական անսամբլները: Ընդ որում, եթե պեղումների ժամանակ հայտնաբերված քիվերի քարերը պատկանում են 9-րդ դարի եկեղեցուն, ապա դրանցից մեկն ակնհայտորեն առանձնանում է 7-րդ դարի երկրորդ կեսի բնորոշ քանդակագործումով, որի զուգահեռները կարելի է տանել Աշտարակի Կարմրավորի, Չվարթնոցի, Եղվարդի, Թալինի եւ այլ հուշարձաններում: Նույնը կարելի է ասել նաեւ 5-7-րդ դարերով թվագրվող հուշակոթողների վերաբերյալ, ինչն ապացույց է, որ Ծովագարոյում եղել են վերը նշված շրջանի եկեղեցական կառույցներ», - գրում է Հուսիկ Մելքոնյանը:

Մնագետը բացահայտել է նաեւ եկեղեցու ամբողջական կառուցվածքը, չափսերը, հետագա ժամանակներում իրականացված նորոգումների հետ կապված իրողությունները:

«Ուշագրավ է եկեղեցու ներքին մշակումը: Այն երկարավուն ուղղանկյունի սրահ է, շուրջ 15 մետր երկարությամբ եւ 6 մետր լայնությամբ: Ունի երկու մուտք՝ հարավից եւ արեւմուտքից: Ավագ խորանի հարավային մասում պահպանված սալահատակի հատվածից եւ նրան եզերող ուղղանկյունի սալաքարից դատելով՝ նախնական բեմառեքը եղել է ավելի խորը: Սակայն հետագայում, ակներեւաբար 16-18-րդ դարերում, եկեղեցու նորոգման հետ կապված, այն ավելի է ընդարձակվել եւ դրվել շուրջ մեկ մետր թեպի արեւմուտք: Այս բեմառեքը կարելի է թվագրել նրա ճակատային մասում շարված հուշակոթողներով, որոնց մի մասը թվագրվում են վերը նշված ժամանակաշրջանով: Ակներեւաբար, նույն ժամանակաշրջանին է վերաբերում նաեւ այսպես կոչված նախաբեմի տեղադրումը, որի պատրաստման համար իբրեւ շինանյութ օգտագործվել են տեղահան արված հարթ տապանաքարեր, - բացակացնում է պեղող հնագետը:

Հաջորդ կարելուր բացահայտումը, որ արել է Հուսիկ Մելքոնյանը, վերաբերում է պեղումների արդյունքում հայտնաբերված խեցեղեն նյութերին: Հնագետն այն բաժանել է երկու հիմնական խմբի՝ շինարարական եւ կենցաղային: Շինարարական խեցեղենն իր հերթին ներկայացված է դարձյալ երկու խմբով՝ հարթ եւ կիսաբոլոր կղմինդներով: «Դատելով դրանց մշակումից, չափերից եւ ձեւերից, սրանց մի մասը վերաբերում են վաղ միջնադարին եւ պեղումների ժամանակ հայտնաբերված քիվի քարի ու հին հուշակոթողների բեկորների հետ միասին կարող են վկայել տեղում ավելի վաղ 5-7-րդ դարերի ընթացքում գոյություն ունեցած կառույցի մասին: Կղմինդների մեծագույն են 9-րդ դարում կառուցված խնդրո առարկա եկեղեցուն: Խեցեղենի հիմնական մասը ներկայացված է խոհանոցային, հասարակ նյութերով, իր տեսականիով բաժանվում է մի քանի առանձին խմբերի, որոնք են՝ կոնքեր եւ ափսեներ, սափորներ եւ կճուճներ, խփեր, ջնարակապատ ամաններ, որոնք հիմնականում թվագրվում են 12-14-րդ դարերով, ջնարակի մի քանի բեկոր՝ 15-16-րդ դարերով», - գրում է Հուսիկ Մելքոնյանը:

/շարունակությունը՝ էջ 5-ում/





ԾՈՎԱԳԱՐՐԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒ ՊԱՏՄԱՆԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԱՔԱՎԱՆ ԵՎ ՇՔԵՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



Մակագրը՝ էջ 4-ում/

Պեղումների ընթացքում մեծ եկեղեցու հարավարևելյան մասում, նրա հարավային պատին կից, բացվել են մեկ այլ, համեմատաբար փոքր չափերի եկեղեցու ավերակները: Ըստ պեղող հնագետի այս նորաբաց կառույցը չափազանց վատ է պահպանվել: Եթե հյուսիսային որոնք պահպանվել է շուրջ 1 մետր բարձրությամբ, ապա հարավայինից առկա են միայն առանձին հատվածներ: Նորահայտ եկեղեցին բազալտի եւ տուֆի քարերով շարված, միանավ թաղակապ սրահ է: Միակ մուտքը հյուսիսարևմտյան անկյունից է, որը բացվում է մեծ տաճարի հարավային մուտքի վրա: Եկեղեցու հատակին մի քանի տապանաքերեր են, որոնցից մեկը՝ 1274 թվականը կրող հայատառ արձանագրությամբ: Եկեղեցու բեմառեջքի ճակատային մասում եւ արևմտյան պատի մեջ շարված մեծ տաճարի տուֆի շինքարերի օգտագործումը կարող է փաստել նորաբաց կառույցի ավելի ուշ շրջանի նորոգումների մասին:

Նորաբաց եկեղեցու արևմտյան մասում, դարձյալ մեծ տաճարի հարավային պատին կից գավիթն է, որը շարված է բազալտի կոփածո քարերով, առանց կրաշաղախի: Որոնաչափերի բացակայությունից դատելով այս կառույցը եղել է փայտածածկ, որը, ամենայն հավանականությամբ, կարելի է դասել Սյունյաց ճարտարապետության մեջ ընդունված ու 14-րդ դարում կառուցված «բաց» գավիթների շարքին:

Հուսիկ Մելքոնյանը պեղումների արդյունքում շատ կարևոր բացահայտումներ եւ ուղղումներ է կատարել նաեւ եկեղեցու տարածքում գետներես պահպանված կամ հողի տակից հայտնաբերված խաչքար-տապանաքարերի վիճագիր արձանագրություններում: Եթե Սեդրակ Բարխուդարյանի «Դիվան հայ վիճագրության» աշխատության մեջ ընթերցված Ծովագարրի եկեղեցուն գտնված 14 արձանագրություն, ապա Հուսիկ Մելքոնյանի ջանքերով դրանք հասցված են քսանի նախկին հրատարակիչների մոտ նկատված սխալների կամ բացթողումների ուղղումներով:

Այսպես, եկեղեցու ներսի մաքրման ժամանակ գտնվել է կարմրավուն տու-

ֆի խաչքար թվագրված 1533 թվականով, հետեւյալ արձանագրությամբ. «ՍԲ ԽԱՉՍ ԲԱՐԵԽՈՍ ՈՎԱՆԻՆ ԵՒ ԳՈՒԼԲԵԿԻՆ»: Մյուսը կամարի սրբատաշ քարն է, կարմիր տուֆից, կենտրոնի խաչաքանդակի շուրջ պահպանված արձանագրությամբ. « ԱՅ ՈՂՈՐՄԻ ԱԼԱՔՍԻՈՍԻ ՅԵՏԻՆ ՔԱՅԱՆԱՅԻ »:

Հաջորդ, առավել հետաքրքիր բացահայտումը բազալտե հարթ տապանաքարի վրայի ութ տողանոց արձանագրությունն է՝ հետեւյալ բովանդակությամբ. «ԵՍ, ՄՍՐ ՀԵՆՎԱՆԵՏԻ, ԱՍԱՐԱՆՈՑՍ ԻՄ ՈՒ...ԱՅՍ Ե ՀԱՆԳԻՍՍ ՄԸՆՇԵՆ ՅԻՇԵՏԵՔ Ի ՔՍ ԹԻՎ ՏԻԵ/1476 թ./:

Հնագետն առանձնակի ուշադրություն է հրավիրում Հեսվան տեղանվան վրա, գտնելով, որ այն կարող էր լինել ինչպես Լեռնային Կիլիկիայի Լամբրոն ամրոցի մոտ գտնվող Հետունաց վանքը կամ միջնադարյան հայ պատմիչ, եկեղեցական գործիչ Ստեփանոս Օրբելյանի «Սյունյաց տան պատմություն» գրքի էջերում հիշատակված Եվանակաց հուն գյուղը՝ 7 չափ հարկով: Մեր կարծիքով, չի բացառվում, որ մերօրյա Ծովագարրը միջին դարերում կրած լինի նույն Հեսվան անունը:

Ամենայն մանրամասնությամբ են տրված եկեղեցու շրջակայքում պահպանված կամ հայտնաբերված տապանաքարերի պատկերաքանդակների նկարագրությունները: Ահա դրանցից մի օրինակ. «Օրորոցածեւ տապանաքար, գորշ տուֆից: Գտնվում է եկեղեցու արևմտյան գերեզմանատանը: Կոթողի հարավային միտին պատկերված է ննջեցյալը, կանգնած դիրքով: Չափ ձեռքին գիրք է, իսկ աջ ուղղված է դեպի գրակալը: Դրանից ք թամբած ձի է, իսկ ձախ կողմում, սեղանի մոտ, մատնավոր մի ձեռքին գինու սափորը, մյուսին գավաթը: Կոթողի հյուսիսային միտին չորս խորադիր կամարների տակ մեկական խաչեր են պատկերված: Արձանագրությունը ելնդավոր տառերով փորագրված է կոթողի վերին մասում, իսկ թվականը՝ արևելյան կողմից: ՍԲ ԽԱՉՍ ԲԱՐԵԽՈՍ ՊԵԿԵՆԱՅԱՐԻՆ ԹՎ ՌԵԻԶ /1677 թ./

Ծովագարրի եկեղեցին պեղող հնագետը խնամքով պահպանել է նաեւ մինչ պեղումներն արված լուսանկարները, որոնք արտացոլում են մինչեւ 2010 թվականը պահպանված հուշարձանի կիսավեր վիճակը:

Փաստորեն, ինչպես վկայում է Ծովագարրի համայնքի նախկին ղեկավար, այժմ Գավառի ա մ ա յ ն թ ի ղ ե կ ա վ ա թ ի օգնական Արամ Կատվալյանը, եկեղեցու պեղումների ավարտից հետո կառույցի վերականգնման նախաձեռնող, գործարար Փայլակ Հայրապետյանի կողմից պատվիրվել է նախագիծ, ձեռնարկվել են շինաշխատանքների առաջին քայլերը, ինչի արդյունքում հեռացվել են հարա-

վային, արեւմտյան եւ հյուսիսային կողմերում մասամբ պահպանված հին պատերի մնացորդները, որոնք պահպանման ենթակա չէին ու խանգարելու էին վերականգնման աշխատանքներին:

Սակայն աշխատանքներն անորոշ ժամանակով դադարեցվել են պայմանավորված գործարարի սնանկացմամբ կամ անձնական այլ պատճառներով: Եվ հիմա ծովագարրիցներին կամ այս հուշարձան այցելողներին, արդեն շուրջ 15 տարի, դիմավորում են միայն ավերակույտերը՝ չհաշված արեւելյան կողմում պահպանված խորանի պատը:

Եկեղեցու վերականգնման գործընթացի մասին իր նկատառումները ներկայացրեց հնագետ Հուսիկ Մելքոնյանը:

«Փայլակ Հայրապետյանը մեր պատմության ու մշակույթի համար շատ կարևոր, գովելի նախաձեռնություն էր հանդես բերել ձգտելով իր պատմա-ճարտարապետական նախկին տեսքի մեջ վերականգնել այս վեհաշուք հուշարձանը: Նա անգամ այնչափ էր շահագրգռված, որ հատուկ հաստոց էր ձեռք բերել պակասող համապատասխան քարերը նույնությամբ հղկելու եւ ձեւավորելու համար, որպեսզի հուշարձանի վերականգնումն անթերի ընթանար ու հասցվեր մինչեւ վերջ: Անգամ գիտեմ, թե ում էր պատվիրել նախագծի կազմումը: Բայց թե ինչ եղավ հետո, արդեն տեղեկություն չունեմ: Իմ ուսումնասիրությունների արդյունքում Հայաստանում շատ թվով շքեղ հուշարձաններ են վերականգնվել, Ծովա-



գարրի եկեղեցու վերականգնումն էլ կարող էր ու կարող է իրագործվել, եթե սրտացավ մոտեցում ցուցաբերվի պետական մարմինների կամ թեկուզ անհատ գործարար-բարերարների կողմից: Այն ժամանակ էլ կային մարդիկ, ովքեր գտնում էին, թե այս հուշարձանը ենթակա չէ վերականգնման, գտնում էին, որ դրա փոխարեն պետք է կառուցել նոր եկեղեցի, սակայն պնդել ու պնդում են, որ այն վերականգնելը միանգամայն հնարավոր է, տեղին ու չափազանց անհրաժեշտ, քանի որ մենք գործ ունենք Հայաստանի ամենաբացառիկ, պատմամշակութային հզոր արժեք կրող հուշարձանի հետ, - նշեց Հուսիկ Մելքոնյանը:

Ծովագարրի համայնքի նախկին ղեկավար, այժմ Գավառի համայնքի ղեկավարի օգնական Արամ Կատվալյանը եւս մեզ հետ կիսվեց իր նկատառումներով:

«Ինչպես տեսնում եք, եկեղեցուն իրականացված պեղումներով բացահայտվել են պատմամշակութային շատ կարևոր շերտեր՝ նորովի լույս սփռելով Ծովագարրի անցյալի հարուստ պատմությանը, մի իրողության, որին մենք չէինք սպասում, նույնիսկ չէինք պատկերացնում: Գործարար, նախաձեռնող Փայլակ Հայրապետյանը նախատեսել էր մեծ միջոցներ ներդնել հուշարձանի վերականգնման համար, այնպես հնագիտական պեղումները մեր կողմից չէին պատվիրվի, շինթույլտվություն չէր տրվի քանդման աշխատանքներ իրականացնելու համար: Ցավոք, մեզինք անկախ պատճառներով, այդքան կարեւոր ձեռնարկը մնաց կես ճանապարհին: Հետագա տարիներին փորձել են տարբեր կառույցների, տեղի գործարարների, առանձին հովանավորների միջոցով շարունակել կիսատ մնացած գործը,

սակայն առայժմ այդ ջանքերը հաջողությամբ չեն պատվում, - ներկայացրեց Արամ Կատվալյանը:

Ծովագարրի եկեղեցու հյուսիսային պատի հիմքից քիչ հյուսիս եւս մի պատի հետք է ցայտուն երեւում առանց շաղախի ու մշակված բազալտե խոշոր քարերով շարված: Առաջին հայացքից էլ պարզ է, որ այս պատը ոչ մի առնչություն չունի Ծովագարրի եկեղեցու կառուցվածքային ամբողջության հետ: Այն արդեն մի ուրիշ կառույցի մասին է փաստում, մեկ այլ պատմամշակութային շերտի, որը դեռեւս ուսումնասիրված չէ մեր գիտական մտքի կամ կառույցների կողմից: Բայց որ այդ հատվածի պեղման դեպքում մենք գործ կունենանք ճշացող մեկ այլ հայտնագործության հետ, դրանում գրեթե չի կարող կասկած լինել:

«Այո, Ծովագարրի եկեղեցու շրջակայքում դեռ պատմագիտական նշանակության շատ գաղտնիքներ կան թաղված, որոնց պեղումները կարող են տալ բազմաթիվ ու հարուստ տեղեկություններ ինչպես Ծովագարրի, այնպես էլ Սեւանի ավազանի հազարամյակների ընթացք ունեցող պատմության մասին: Անշուշտ, եկեղեցու հյուսիսային պատից դուրս նկատված պատը մի այլ կառույցի տարր է, որը դեռ պետք է ուսումնասիրվի նոր պեղումներով, որպեսզի հաստատվի նրա ստույգ ժամանակագրությունը: Չի բացառվում, որ այն կարող է լինել ուրարտական կամ հետուրարտական դարաշրջանի կառույցի մի մասը, որի բացահայտմամբ մենք կհարստացնենք մեր երկրի

պատմությունն ու պատմամշակութային արժեքները: Ուստի, ոչ միայն Ծովագարրի եկեղեցու վերականգնման ծրագիրն է հույժ անհրաժեշտ, այլ նաեւ այս հուշարձանի շրջակայքում պեղումների շարունակումն է շատ կարևոր, -մեր գրույցը եզրափակեց Հուսիկ Մելքոնյանը:

Հաջի Մուխան կամ Աճամխան օտարահունչ անունները Ծովագարրին կացվել են 18-րդ դարի սկզբում միայն, ինչպես որ վկայում է իր գրքում Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանը: Այս բնակավայրն այդ ժամանակ դարձել է թուրք-պարսկական բանակների բախման կիզակետ, ու դժվար չէ ենթադրել, թե դրանից հետո ինչ դառը ճակատագրի է արժանացել հայ բնակչությունը, այնուհետ արդեն պատմամշակութային հուշարձանները, որոնք ավերվել են անխնա ու ամենաթշնամական կերպով:

Իսկ հիմա հեթոք մերն է՝ տեր կանգնելու մեր պատմամշակութային արժեքներին, դրանք վերականգնելու, հանրահռչակելու, սրբորեն պահպանելու եւ սերունդներին փոխանցելու համար:

Մնում է հուսալ, որ սույն հոդվածի հրատարակմանը կհաջորդեն համապատասխան արձագանքներ պետական մարմինների, շահագրգռ անձանց կողմից՝ տեղից շարժելով թե՛ Ծովագարրի եկեղեցու վերականգնման, թե՛ պեղումների հետագա շարունակման առաջամ անավարտ մնացած նպատակներն ու ծրագրերը:

Այնպես այս արժեքավոր, հայկականության հազարամյակների շունչն ու ոգին մեզ փոխանցող հուշարձանի հիմնավեր վիճակը մեզանից յուրաքանչյուրին պատիվ չի բերում:

Խոսարով Խլղաթյան



ԳԱՎԱՌԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ ԱՆՑԿԱՅՎԵՑ ԶՐԱՆՏ ՄԱԹՆՈՍՅԱՆԻ 90-ԱՄՅԱ ՀՈՐԵԼՅԱՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԶՈՒՇ-ՑԵՐԵԿՈՒՅԹ

Գավառի համայնքային գրադարանի տնօրինության նախաձեռնությամբ եւ գրադարանի մատենագետ Նորա Մարտինյանի կազմակերպմամբ Գավառի համայնքային գրադարանում տեղի ունեցավ «Ես տերն եմ իմ ժամանակի» խորագիրը կրող գրական ցերեկույթ, որը նվիրված էր հայ գրականության դասական Զրանտ Մաթնոսյանի 90-ամյա հորեկյանին:

առանձնահատկությունները: Այնուհետ Զրանտ Մաթնոսյանի ստեղծագործության մասին բանախոսությամբ հանդես եկավ գրական ցերեկույթի հատուկ հրավիրյալ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, «Զրանտ Մաթնոսյան» գրական մրցանակի դափնեկիր Վաչագան Գրիգորյանը, ով հարցույթատախանի ձեռնարկով հնարավորինս անդրադարձավ մեծ գրողի կյանքի հետաքրքիր դրվագներին ու գրական հարուստ ժառանգությանը:



Ցերեկույթն ուղեկցվեց ընթերցումներով, բեմադրական հատվածներով եւ

թեմատիկ գեղարվեստական կատարումներով:
-Զրանտ Մաթնոսյանը համաշխարհային ճանաչման հասած գրող է, հայ արձակագրի նոր բարձունքների հասցրած անգուզական մտավորական: Նա իր ընթերցողի հետ միշտ խոսել է բացառապես անկեղծ, շիտակ լեզվով, միայն ու միայն հայրենի հողի, նրա վրա ապրող մարդու նկատմամբ ազնվագույն սիրով, ու դրանում է կայանում նրա անկշռելի մեծությունը: Զրանտ Մաթնոսյանը միշտ կմնա արդիական, նրա թողած ստեղծագործությունները բոլոր ժամանակներում կարող են տալ ընթերցողներին հետաքրքրող հարցերի պատասխանները,- բանախոսությունն ամփոփեց Վաչագան Գրիգորյանը:
Խոսարով Խլղաթյան

ՎԱՐԻՆԵՍԻ «ԱՆԴՐԱՆԻԿ» ՖՈՒՏԲՈՒԼԱՅԻՆ ԱՎՈՒՄԲԸ ԽԱՂԱՇՐՋԱՆԵՆ ԱՎԱՐՏԵԼ Է ԲԱՐՁՐ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ



Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի «Անդրանիկ» ֆուտբոլային ակումբը Զայաստանի առաջին խմբի խաղում:

ջին խմբի առաջին խաղաշրջանն ավարտել է երրորդ տեղում եւ միաժամանակ Զայաստանի գավաթի խաղարկությունում դուրս է եկել քառորդ եզրափակիչ:
«Անդրանիկ» ֆուտբոլային ակումբի նախագահ Վարդան Դավթյանի տեղեկացմամբ առաջին խաղաշրջանում թիմն անցկացրել է 17 հանդիպում, տարել 12 հանրաճանաչ, կրել չորս պարտություն, մեկ խաղ ավարտել ոչ-ոքի, խփել 36 գնդակ՝ բաց թողնելով 16-ը:
Թիմը հաջող է հանդես եկել նաեւ Զայաստանի գավաթի խաղարկությունում դուրս գալով քառորդ եզրափակիչ: Մինչ քառորդ եզրափակիչ հասնելը նա պայքարից դուրս է թողել Զայաստանի Պրեմիեր լիգայի մեկնախաղային ԲԿՄԱ-ին եւ Իջեւանի «Բենտոնիտ»-ին:
Առաջին խմբի լավագույն ռմբարկուների ցուցակը վստահորեն գլխավորում է «Անդրանիկ» ակումբի հարձակվող, ազգությամբ միգրանտի Իսմայիլ Օլալայեւն, ով 17 խաղում խփել է 18 գոլ, մեկ անգամ էլ

գոլ է հեղինակել Զայաստանի Գավաթի խաղարկությունում:
-Առաջին խմբի առաջին խաղաշրջանն ավարտվեց, եւ «Անդրանիկ» ՖԱ-ն եւս մեկ կարեւոր փուլ թողեց իր հետեւում:
Առաջնությունը մեզ համար եղավ մրցակցային, լարված եւ երբեմն էլ՝ ուսուցողական ճանապարհ, որտեղ մեր թիմը ոչ միայն պայքարեց յուրաքանչյուր խաղում, այլեւ ձեռնավորեց ավելի ուժեղ թիմային ու կամային ոգի: Երկրորդ խաղաշրջանում մենք հանդես կգանք ավելի վստահ, ավելի նպատակամղված, կպայքարենք ավելի բարձր տեղի համար,- նշեց Վարդան Դավթյանը:
Տնային խաղերն առայժմ «Անդրանիկ» թիմն անցկացնում է Սեւանի քաղաքային մարզադաշտում, մինչեւ որ Վարդենիսի քաղաքային մարզադաշտը կհամապատասխանեցվի միջազգային չափորոշիչներին:
«Գեղամա աշխարհ»

ԳԱՎԱՌԻ ՀԵՆՐԻԿ ԹԱՆՍԻՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՍԱՆԵՐԸ ՄՐՑԱՆԱԿՆԵՐ ԵՆ ՆՎԱՃԵԼ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏՈՒԳԱՏԵՍՈՒՄ



Գավառի Զենրիկ Թախյանի անվան երաժշտական դպրոցի 25 սաներ հաջողությամբ են մասնակցել «Մինորա» «Գլոբալ Արտ Ֆեստ» միջազգային մրցույթ-փառատոնին հանդես գալով դաշնամուրային, վոկալ, դուդուկի եւ քանոնի բաժիններում:
Արդյունքները եղել են տպավորիչ. երաժշտական դպրոցի սաները վերադարձել են մրցանակային տեղերով եւ դիպլոմներով: 1-ին մրցանակ են նվաճել դուդուկի բաժնի սան Զովիաննես Ասիկյանը, վոկալի բաժնի սան Զայկ Զայրապետյանը եւ դաշնամուրի բաժնի սան Սամվել Խաչատրյանը: 2-րդ մրցանակի են արժանացել դուդուկի

բաժնի սան Ալեն Զակոբյանը, վոկալի բաժնի սաներ Արիաննա Զովիաննիսյանը եւ Ալեն Զովիաննիսյանը: 3-րդ մրցանակի են արժանացել վոկալի բաժնի սան Անի Ասիկյանը, քանոնի բաժնի սան Գոհար Ասիկյանը, դաշնամուրի բաժնի սաներ Լիլիթ Զաքոբյանը, Մանուել եւ Միքայել Մարտիրոսյանները: Դիպլոմների են արժանացել վոկալի բաժնի սան Վանիկ Գեյջանը, դաշնամուրի բաժնի սաներ Նելլի Դաշտոյանը, Անգելինա Զանդոյանը, Սարգիս Գրիգորյանը, Մարինա Մարտիրոսյանը, Սառա Միլիտոնյանը, Նարեկ Թադևոսյան, Ալեն Սուրադյանը, Մարիա Առաքելյանը, Զայկ Գալոյանը, Ալլա Կարապետյանը, Էլեն Խաչատրյանը, Անգելինա Զակոբյանը եւ Գոհար Ասիկյանը:
Գավառ համայնքում շուքով ու հպարտորեն են ընդունել մրցանակակիրներին:
Ալվարդ Մանուկյան

ԳԱՎԱՌԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑԻ ՍԱՆԵՐԸ ՄՐՑԱՆԱԿՆԵՐ ԵՆ ՆՎԱՃԵԼ «ԳԼՈՒԲԱԼ ԱՐՎԵՍՏ» ԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՓՈՒԱՏՈՒՄ



Գեղարքունիքի մարզի Գավառի քաղաքի Գավառի քաղաքի արվեստի դպրոցի սաները մրցանակներով եւ դիպլոմներով են արժանացել «Գլոբալ արվեստ» հանրապետական փառատոնից:
«Գլոբալ արվեստ» փառատոնի մրցույթային փուլում երեխաները ստեղծագործում են ժյուրիի ներկայացրած թեմաներով, տեղում առանց ծնողների եւ ուսուցիչների ներկայության, ինչը նպաստում է նրանց ինքնուրույնությանն ու ստեղծագործական ազատությանը:
Գավառի գեղարվեստի դպրոցը ներկայացնող շնորհալի սաները մրցույթի դահլիճում նկարել են տեղում եւ արժանացել դիպլոմների ու պատվավոր մրցանակային տեղերի: Այսպես, «Լա-վագույն վրձնահարված» անվանակարգում հաղթող է ճանաչվել Լիլիա Ղարիբյանի աշխատանքը:
Առաջին մրցանակի են արժանացել Գավառի Գեղարվեստի դպրոցի սաներ Լիլիա Ղարիբյանը, Ժաննա Ավետիսյանը, Էլեն Մինասյանը, Վարադա Մահալյանը եւ Ալեքս Խաչատրյանը:
Երկրորդ մրցանակի է արժանացել Արփի Մալաթյանը, երրորդ մրցանակի Լալա Խանձրաժյանը եւ Միլվի Սնեյանը: Դիպլոմակիրներ են դարձել Էլենա Ղազաբյանը, Սոնյա Քալոյանը եւ Անգելինա Ղարիբյանը:
Ալվարդ Մանուկյան

ՍԵՎԱՆՈՒՄ ԿԱՅԱՑԵԼ Է ԹԱԵՔՎԱՆԻՈՑԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

Գեղարքունիքի մարզի Սեւան քաղաքի Ն. Դազարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոցում անցկացվել է «Սեւանի գավաթ» բաժնեկանգոյի առաջնությունը, որին մասնակցել են Երեւանի, Ապարանի, Նոյեմբերյանի եւ Սեւան քաղաքի մարզիկները:
Թիմային հաշվարկով 1-ին տեղը գրավել են Սեւանի Նորիկ Դազարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոցի եւ Երեւան քաղաքի «ՎԻԿՏՈՐ» ակումբի, 2-րդ տեղը՝ Նոյեմբերյանի, 3-րդ տեղը՝ Երեւանի «Սեւ հովազ» ակումբային թիմի մարզիկները: Մրցանակային տեղեր գրաված մարզիկները պարգևատրվել են մեդալներով եւ պատվոգրերով:
Ն.Դազարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոցի տնօրենը



մարզիչներին պարգևատրել է շնորհակալագրերով, իսկ առաջնությունում ԶԳ «Նվիրյալներ» ՈՒՎ նախագահը հավաստագիր է հանձնել մարզադպրոցի տնօրեն Գ. Ավետիսյանին:
Արմինե Դուկասյան

ԳԱՎԱՌԻ ՔԱՂԱՔՈՒՄ ՀԻՄՆԱՆՈՐՈՎԵԼ ԵՆ ԵՐԵՔ ՓՈՂՈՑՆԵՐԻ ՆՐԱՆՑՔՆԵՐ

ԶԳ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում հիմնանորոգվել են Սայաթյան, Զորավար Անդրանիկ, Իսահակյան փողոցների 2-րդ նրբանցքները:
Սուբվենցիոն ծրագրում ներառված են Իսահակյան, Կոլոտ Զայրապետ փողոցները, Սայաթյան, Զորավար Անդրանիկ, Իսահակյան փողոցների 2-րդ նրբանցքները: Ծրագրի արժեքը 66 միլիոն դրամ է, որի 50 տոկոսն հատկացնում է ԶԳ կառավարությունը, 50 տոկոսը՝ Գավառի համայնքապետարանը:
Ծրագրով նախատեսված է վերոնշյալ փողոցների եւ նրբանցքների ասֆալտապատում շուրջ 1500 զծամետր երկարությամբ եւ 6530 քառակուսի մետր մակերեսով:
Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2025 թվականի նոյեմբերի սկզբին եւ դեկտեմբերի 1-ի դրու-

թյամբ իրականացվել 50 տոկոսով: Դրանք ընդհատվել են միայն ցուրտ եղանակների պատճառով ու կշարունակվեն 2026 թվականի գարնանը եղանակների տաքանալուն պես:
Շինարարական աշխատանքներն իրականացնում է «Գավառի ճՇՇ» ԲԲԸ-ն: Այս փողոցների բնակիչները ոգևորված են ինչպես արդեն կատարված աշխատանքներով, այնպես էլ մյուս փողոցների հիմնանորոգմամբ: Վերջապես իրենք էլ հնարավորություն կունենան բարեկարգ ճանապարհով երթնելու: Ծրագրի իրականացմամբ ոչ միայն լուծվում է տասնամյակներ շարունակ անբարեկարգ մնացած փողոցների հիմնանորոգման խնդիրը, այլեւ թեթեւանում է երթնելությունը, քանի որ այս փողոցները Գավառ քաղաքում իրար են կապում կենտրոնական մի շարք երթուղիներ:
Ալվարդ Մանուկյան

ՎԵՐԱՆՈՐՈՎՎԵԼ ԿԱՀԱՎՈՐՎԵԼ Է ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՍԵՆՅԱԿԸ

ՀՀ ԿԳՄՍ նախարարության դրամաշնորհային ծրագրով եւ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի աջակցությամբ վերանորոգվել եւ կահավորվել է Գեղարքունիքի երկրագիտական թանգարանի հնագիտության սենյակը: Վերանորոգումից եւ կահավորումից հետո արդեն այլ տեսքով է ներկայանում հնագիտության սենյակը: Հազարամյակների պատմություն ունեցող խեցեղենը ցուցադրվում է պատշաճ կերպով: Այս սենյակն առավել զրավիչ է դարձել նոր ցուցափեղկերի եւ հատուկ լուսավորության շնորհիվ: Հնագիտական սենյակի վերանորո-




գումն ու կահավորումը հնարավոր են դարձել ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Աջակցություն մշակութային ժառանգության պահպանմանն ու հանրահռչակմանը» ծրագրի շրջանակում: Որոշ ցուցափեղկերի ձեռքբերման գործում էլ օժանդակել է Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմը: Հնագիտության սենյակի վերանորոգման ու կահավորման համար հատկացված դրամաշնորհը կազմել է 2 միլիոն 290 հազար դրամ: Թանգարանի աշխատակիցների եւ այցելուների ցանկությունն է, որ տարբեր ժամանակաշրջանները ներկայացնող սենյակները եւս բարեկարգվեն, եւ թանգարանային հարուստ ֆոնդը ցուցադրվի լավագույն պայմաններում:

Անահիտ Կարեյան

ՄԵՆԻ ԿՈՐՑՐԻՆԻ ՀԱՅՐԵՆԱՊԱՇՏ ՄԱՐԴՈՒՆ, ԲԱՅՑ ՆՐԱ ԱՆՈՒՆՆ ՈՒ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ ԿԿՐԵՆԻ ՄԵՐ ՀՈՎԻՆԵՐՈՒՄ

78 տարեկան հասակում երկրային կյանքին անժամանակ հրաժեշտ տվեց Արցախյան շարժման ու գոյամարտի մասնակից, «Գարեգին Նժդեհ» ստեղծագործական ակումբի հիմնադիր ղեկավար, ոգեղեն ուսուցիչ, անկույն հայորդի, «Գեղամա աշխարհ» թերթի մեծ բարեկամ, բոլորիս կողմից սիրված ու հարգված Հովհաննես Միրիբյանը: Հովհաննես Վաչիկի Միրիբյանը ծնվել է 1947 թվականին, ՀԽՍՀ Նոր Բայազետ, այժմ՝ Գավառ քաղաքում: 1964 թվականին ավարտել է հայրենի քաղաքի թիվ 1 միջնակարգ դպրոցը, 1969 թվականին՝ Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի լեռնամետալուրգիական ֆակուլտետը: Մինչեւ 1990 թվականը աշխատել է հայրենի քաղաքի «Դիպուլ» արտադրական միավորումում՝ որպես արտադրամասի պետ:

Արցախյան շարժման հենց առաջին օրերից 1988 թվականի փետրվարից, զինվորագրվել է հայրենի երկրի սահմանների ու Արցախի դատի պաշտպանությանը՝ գործելով «Հայ Դատ» կազմակերպության մարտական ջոկատում: Մյուս շրջաններում էլ իր անձնակազմը հարգել է իր ընտանիքի անդամներին: Նա լույս էր ընծայում հայրենաշունչ հոդվածներ ու բանաստեղծություններ, գրքեր ու գրքույկներ, կազմակերպում ու ղեկավարում գրական խմբակներ, գրողների ու մտավորականների հետ հանդիպումներ, հայրենիքի հզոր ապագայի կերտման համար կարելուք քննարկումներ: Նրա որոշ հոդվածներ ստեղծագործություններ տեղ են գտել «Գեղամա աշխարհ» մարզային թերթում:



Մտերմագործել սկսել է 1970 թվականից:

Մտերմագործություն միտինգային տրամադրություններով բռնկված քաղաքական կամ հասարակական գործիչների Հովհաննեսը գեներով ու զինված ընկերների հետ զննց մարտադաշտ կռելու այն նյութական հաղթանակը, որը հայկական անկոտորում ոգու առջև ծնկի բերեց հայաստանի թշնամուն, հայ բնակչության հանդեպ Սոււմալիայում ու Ադրբեյջանի այլ վայրերում սոսկալի եղեռնագործություն իրականացրած բողոքիներին: Հայրենիքի համար ճակատագրական ու օրհասական այդ օրերին եւ տարիներին Հովհաննեսն անվարան զննց անձնուրաց խիզախումների մոռացած հարազատ ընտանիքի հոգ-

ներն ու կարիքները, սեփական աշխատանքը, առողջությունը: Ու դժվար չէ պատկերացնել, թե ֆիզիկական ու հոգեկան ինչպիսի տառապանքների ու անձնական զրկանքների միջով է անցել մեր հերոսը, որպեսզի հասնի իր առջև դրված վեհագույն նպատակներին: Ավելի քան 6 տարի փոթորկվում էին Հայաստանն ու Արցախը, փորձում դիմակայել զանազան թշնամիների մութ դավերին ու ոճիրներին, որոնք արեւտաբեր ամպերի նման օրնիբուն չոքել էին մեր հայրենիքի բախտի ու ապագայի վրա: Ու այդ տեսական ժամանակի ընթացքում, չնայած ստացած ծանր վիրավորումներին, նա կրկին մեկնում էր մարտադաշտ արհամարհելով ամեն մի խոչընդոտ ու դժվարություն: Այդ, Հովհաննեսին իր ընտրած նվիրումի ճանապարհից ոչ մեկն ու ոչ մի դիպված չկարողացան հետ պահել, քանզի նա գաղափարի շատ համոզված ու կոփված մարտիկ էր, ազգասեր ու մարդասեր անձնավորություն: Անգամ նա ականջալուր չէր լինում ծնողների, կնոջ, եղբոր ու քրոջ թախանձանքներին ու միշտ առաջինն էր հայտնվում այնտեղ, որտեղ իրեն կանչում էր հայրենի հողի ծայրը: Հովհաննես Միրիբյանը մասնակցեց նաեւ 2016 թվականի ապրիլյան բառօրյա պատերազմին կամավոր մեկնելով առաջնագիծ: Նա ժամանակին կարողացել էր հասնել դիրքեր, օգնել, սատարել զինվորներին, իր մարտական փորձն ու գիտելիքներն էր փոխանցել երիտասարդ սպաներին, հրամանատարներին: Նրա զինակից ընկերները պատմում էին, որ մարտական գործողությունների ընթացքում չեն էլ պատկերացրել, որ Հովհաննեսը մարտադաշտ է հասել պրոթեզավորված ոտքով, որը կորցրել էր Արցախյան առաջին պատերազմի ժամանակ: Ու երբ մարտի թեժ պահին զինվորներն օգնության, խորհրդի համար մոտեցել են նրան, զարմանքով տեսել են, որ նա անդամահատված ոտքի պրոթեզն է հագնում: Իր ու մարտական մյուս ընկերների

ծեռամբ ու ոգով կռած խաղաղության տարիներին էլ Հովհաննեսը քուն ու դադար չունեց, այլ փորձում էր հայ սերունդների մեջ արմատավորել Գարեգին Նժդեհի ցեղապաշտական, ոգեղեն գաղափարները, հոգով ու մարմնով կոփել իր հայրենակիցներին, հայրենասիրական գաղափարներով ոգեղնչել շրջապատին: Նա լույս էր ընծայում հայրենաշունչ հոդվածներ ու բանաստեղծություններ, գրքեր ու գրքույկներ, կազմակերպում ու ղեկավարում գրական խմբակներ, գրողների ու մտավորականների հետ հանդիպումներ, հայրենիքի հզոր ապագայի կերտման համար կարելուք քննարկումներ: Նրա որոշ հոդվածներ ստեղծագործություններ տեղ են գտել «Գեղամա աշխարհ» մարզային թերթում:

Գավառի քաղաքային գրադարանը նա դարձրել էր իր ու շատ գաղափարակիցների հարազատ տունը, ազգային ուխտի վայրը, որտեղ հայրենասիրության ու հայրենատիրության ուխտին հաղորդվում էին բազմաթիվ պատանիներ ու երիտասարդներ: Նրան ճանաչում ու գնահատում էին Հայաստանի սահմանամերձ բնակավայրերի ու Արցախի բոլոր այն շենքերի բնակիչները, որոնք գոյամարտ էին մղել մեր հողի ու արյան թշնամիների դեմ, նրան հավուր պատշաճի էին գնահատում ու ճանաչում մեր բանակի ղեկավարները, հերոսամարտիկներն ու հրամանատարները, ինչի վկայությունը պետության կողմից շնորհված «Արիություն» շքանշանն է, պատվոգրերը, հուշանվերները, շնորհակալագրերն ու այլ պարգևները: Հովհաննես Միրիբյանը ազգային շարժումներին մասնակցել է դեռեւս 1965 թվականից, երբ առաջին անգամ Երեւանում տեղի ունեցան Հայոց ցեղասպանության դատապարտման հետ կապված հզոր ցույցեր եւ բողոքի երթերը, որոնց ընթացքում նա իր վաղամեռիկ եղբայր Գուրգենի ու նրա ընկեր-

ների հետ Մասիս լեռան պատկերով թուղցիկներ էր տարածում ցուցարարների շրջանում: Ստեղծագործել սկսել է 1970 թվականից: Հովհաննես Միրիբյանը երկրային կյանքում թողեց սիրող կին, երկու զավակ եւ վեց թոռ, ովքեր միշտ հպարտ կլինեն իրենց փառավոր ծնողի նույնքան փառավոր գործերով, վեհ ու հերոսական անվամբ: Նույնքան հպարտ ու խոնարհ, երախտապարտ կլինեն նրա հարազատները, բարեկամները, մարտական ու հոգեւոր ընկերները, նրան ճանաչողները, քանզի Հովհաննեսը մի ճառագող լույս էր մեր կյանքում, որի փայլը երբեք ու ոչ մի ժամանակ չի խամրելու թե՛ սերունդների հիշողության, թե՛ մեր հավերժական երթի մեջ: «Գեղամա աշխարհ» թերթի խմբագրություն Գավառի քաղաքային գրադարան Մի խումբ ընկերներ

ՄԱՆԿԱՎԱՐԹՈՒԹՅԱՆ ԱՆՆՈՒՆՁ ԿՎԻՐՅԱԼԻ ԱՆՈՒՆԸ ԿԱՊՐԻ ՀԱՎԵՐԹ

85 տարեկան հասակում մեզանից հեռացել ու հավերժության գիրկն է գնացել վաստակաշատ մանկավարժ, շրջապատում շատ սիրված ու հարգված անձնավորությունը՝ Լեւիկ Սոսի Մուղոյանը: Նա ծնվել է 1940 թվականին, ՀԽՍՀ Նոր Բայազետի շրջանի Սարուխան գյուղում: Նրա երակներում հոսում էր վանեցի ծնողներից ժառանգած խոհեմությունը, համառությունը, ազատատենչությունը: Ծնողները միզուցեց պատահական չեն բնավորվել Գեղամա լեռների լանջերին, կապուտյա Սեւանի հարեւանությամբ՝ Վանա լեռնաշխարհի ու Վանա ջրերի կարոտն ամբարած իրենց սրտում: Վաղ հասակից նա կորցնում է հորը, ով՝ հերոսաբար զոհվում է Հայրենական պատերազմում՝ վերագտած օրրանը պահելու համար: Փոքր հասակից Լեւիկն իր ուսերին է վերցնում ընտանիքի հոգսերը՝ երբեք չմոռանալով կրթություն ստանալու կարեւորությունը:



1959 թվականին նա զորակոչվում է բանակ եւ ծառայում է Մերձբալթյան նավտորմային գործակալության Մուրմանսկի ստորաբաժանումում: Թե՛ բանակում ծառայելու տարիներին նրան նախանշված էր զինվորական ու գիտական բեղուն ճանապարհ, բայց նա մնում է անսասան իր որոշման մեջ, ընտրելով հայրենի գյուղը, նրա բարգավաճումը, իր ընտանիքը, սիրասուն սերը ընտանիքի նկատմամբ: 1963-64 թվականներին սովորում եւ ավարտում է «Կոլտնտեսային եւ սովխոզային ղեկավար կադրերի միամյա դպրոց»-ի դասընթացները, միաժամանակ որոշում է ուսումը շարունակել բուհում: Անսահման սերը ուսման, բնական գիտությունների նկատմամբ ստիպում են ընտրել մանկավարժի մասնագիտությունը, որը հետո պիտի դառնար իր կյանքի

հիմնական նպատակն ու տարերքը: Լեւիկ Մուղոյանն ընդունվում է Կիրովականի պետական մանկավարժական ինստիտուտի մաթեմատիկայի ֆակուլտետ, որն ավարտելուց հետո անցնում է մանկավարժական աշխատանքի Լանջաղբյուրի, ապա՝ Գեղարքունիքի դպրոցում: 1981-2009 թվականներին աշխատում է որպես մաթեմատիկայի ուսուցիչ հայրենի Սարուխան գյուղում՝ դասավանդելով թիվ 1 եւ թիվ 3 միջնակարգ դպրոցներում: Աշխատանքային երկար տարիների ընթացքում նա վաստակում է սաների անմնացորդ սերը՝ նրանց կրթելով, դաստիարակելով ու կյանք ճանապարհելով: Վաստակաշատ մանկավարժ, ազնիվ ընկերոջ, հայրենասեր ու պարտաճանաչ քաղաքացու, սիրված ծնողի գործն ու անունն այսուհետ կապրեն մեր սրտերում: Սարուխանի թիվ 1 եւ 3 միջնակարգ դպրոցներ Մի խումբ ընկերներ